

դը : Լ'մերիկայի շատ ազգեր նոյնպիսի բուրգեր շինեցին իրենց երկրին մէջ :

Հենք կարծեր որ խաբուինք երբոր ըսենք թէ բարձր աթոռանիստ եկեղեցիները, կալուածական դղեակները և արեգակնակները կամ հովասուն բարձր տեղուանքը նոյնպիսի առթով շինուած պիտի ըլլան :

Յրէնէլի փարոսը չշինուած, Վաղղիոյ ծովափանցը վրայ բրգերէն աւելի լաւագոյն չենք չէր կրնար շինուիլ՝ նաւորդաց նպատակ տեսութեան մը գործելու համար :

Թէ ամենէն բարձր բուրգերը կանգնող թագաւորաց յիշատակը պատուեցին Լագիպտացիք, և իրենց գերեզմանատեղին որոշեցին, ասկէ աւելի բնական բան չկայ : այնպէս շատ ալ բնական է նաև որ աս բրգանց դիրքը ու տեղը աստղաբաշխօրէն ամենեւին կարելի չըլլէր թեամբ ալ ուղղած ըլլան : Լա թէ աս բրգանց՝ եգիպտական ասպարէզի մը չափը տուած ըլլան, ինչպէս որ ցըցուց Պ . Դամար իմաստունը, խելք կը պառկի ասոր ալ : բայց խելքերնիս չհասնիր որ ինչու համար աս կոթողները այսչափ մէկմէկու հեռու կանգնած ըլլան, երբ վախճաննին իրաւցընէ ըլլար անապատին աւազը արգիլել և «Իս-ն» ըսուած աննկուն կամ սաստկաշունչ խորշակ քամին զօրութիւն խորտակել :

Հապա ինչպէս համարինք թէ այսչափ ահագին ծախք և աշխատութիւն՝ փառասէր իշխանի մը արտաւոյց հաճոյքը լեցընելու համար եղած ըլլան, ուր անանկ նախատելի մարդ պէտք էր համարուէր ամենուն առջև առջի բուրգ շինողը, որ իրեն յաջորդները և ոչ մշտքերնէն անցընէին այնպիսի ունայն ու յիմարական խորհուրդներ :

Պ . Դամար դիտեր տեսեր է որ բոլոր բրգանց ծայրը երկրաչափական պրգտի բրգաձևներով կը լմննան, ճերմակ մարմարիոնի մէջ ագուցած, որուն ծայրը ուրիշ բան չենք կրնար կարծել որ դրուած ըլլայ բայց եթէ վառելի բոց :

Բայց երբոր մտածենք Լագիպտոսի մշտապարզ երկինքը, և անոնց գագա-

թանց բարձրութիւնը, ուր մարը մննող արևուն ճառագայթները երբոր Լեղոսը խոր խաւարի մէջ թաղուած է դեռ երկու ժամ ալ անոնք կը ցոլան, երբոր լուսինը կուգայ անոնց սպիտակափայլ երեսները լուսաւորելու, կրնանք գուշակել որ քիչ անգամ կ'ըլլար որ անապատին մէջէն անցորդները ու Լեղոսի մէջ նաւաւարները չտեսնէին բուրգերը :

Ենչուտ ասոր համար ալ է որ յոյն նաւաւարները (ինչպէս որ վերն ըսինք) Բերաֆա անունը տուին առջի անգամ որ տեսան բրգանց լուսաւորած գագաթները :

Արեմն մեր այս ըսած խօսքերէն կը հետևի որ բրգերը էին մէյմէկ փարոս, լապտեր և դիտարան, անհրաժեշտ կարևոր Լագիպտացուց, որ նաև շատ անգամ անապատին սահմանները կանգնուած շինից մէյմէկ ապահովութիւն եղան :

ՊԼՏՄՈՒԹԻՒՆ

Լոգովիկոս ԺԶին վարքն ու մահը ¹ :

Տաճարի ըսուած աշտարակին մէջ հինգ ամիս ծառայեցի թագաւորին և իր մեծափառ ընտանեացը : և թէպէտ քաղաքական Լարեկարգութեան պաշտօնարանին սպայքը՝ մեծ արթնութեամբ կը հսկէին վրանին, սակայն ահով ալ կըցայ այլևայլ հարկաւոր տեղեկութիւններ ձեռք ձգել, եթէ գրաւոր և եթէ անգիր, բանտին մէջ պատահած դէպքերուն վրայօք :

Բայ գրուածքս շարագրելուս վախճանը ընդարձակ պատմութիւն մը չինել չէ, այլ նիւթ մատակարարել անոնց որ ատեն անցնելէն ետքը ուզեն ան եղածին պատմութիւնը գրելու ձեռք զարնել : Եւ որովհետեւ թագաւորին և իրեն ընտանեացը դէմ եղած ամէն նախատանացը ես միայն ականատես վկայ

գտնուեր եմ, իրաւամբք իմ վկայու-
թիւնս ամենէն աւելի ստուգապատում
կրնայ սեպուիլ: Աստի ջանքս պիտի
ըլլայ մանրամասն կերպով ամէն եղած-
ները պատմել՝ առանց խորհրդածու-
թեան մը կամ կողմնակցութեան:

Այս պատմական օրագրութիւնս կը
սկսիմ 1792 տարւոյն () գոստոսի 10^{էն}.
ան ահաւոր օրէն, յորումքանի մը հո-
գի միաբանած ձեռք զարկին հիմն ի վեր
տապալելու այն գահը որ տասնըչորս
դարէ ի վեր հաստատուած էր. և թա-
գաւորնին շղթայի զարնելով, թշուա-
ռութեանց անդունդի մը մէջ գահավի-
ժեցին զՎաղդիան:

() գոստոսի 10^{էն} Տօֆէնի դքսին թա-
գաժառանգ արքայորդւոյն ծառայու-
թեանը մէջն էի: Վախճանութեան օրուան
առտըւընէն ի վեր ամէնքն ալ մեծ շփո-
թութեան մէջ էին, ու Վարիզու ամէն
կողմը բազմութիւն մարդկանց կը ժող-
վուէր, որոնց դաւադրութիւնը ծանօթ
էր արդէն (Սիւլլուսի մէջ: Այս գիշե-
րուան մօտ քաղքին բոլոր զանգակները
պիտի զարնուէին ժողովուրդը ոտք հա-
նելու համար. և Վարսիլիացիք սրբոյն
Մատնի կոչուած արուարձանին բնակ-
չացը հետ միանալով, մէկէն բերդը պա-
շարելու պիտի երթային: Այն միջոցին
ես արքայորդւոյն քով զբաղած ըլլալով
չկրցայ դուրսի եղածները տեսնիտեղը
իմանալ, ուստի այն բաները միայն կը
նշանեմ հոս որ նոյն օրը պալատին մէջը
հանդիպեցան:

Ամսոյս իննին իրիկուան ժամը ութու-
կէսին արքայորդին պառկեցընելէն ետ-
քը, (Սիւլլուսի պալատէն ելայ և գացի
ժողովրդեան շարժումը դիտելու: Միջո-
ցին վայրագաւթները գրեթէ 8000
հոգի ժողվուած էին, և ամէնքն ալ
կազմ և պատրաստ թագաւորին կեան-
քը պաշտպանելու: Անկէ արքունի
պալատը գնացի. հոն ալ բազմութիւ
ազգային պահապան զօրքեր տեսայ,
որոնք զինուոր և պատրաստուեր էին
դէպ ի (Սիւլլուսի երթալու, որպէս զի
իրենցմէ առաջ գացած գնդերուն հետ
միանան. բայց ժողովրդեան խուռն

բազմութիւն մը խռովարարներէն գրը-
զուած սարսափելի աղաղակով բոլոր
մերձակայ փողոցները կը թնդացընէր:

Ամը 11^{էն} ամրոցը մտայ ուր որ
ժողվուած էին պալատականք և թա-
գաւորին ընտանիքը, ամէնքն ալ սաս-
տիկ խռոված: Հագիւ թէ արքայոր-
դւոյն դստիկոնը անցած էի, խռովու-
թեան աղաղակ մը փրթաւ. զանգա-
կները զարնուիլ սկսան, և զօրքերը զէն-
քի տակ ժողվելու թմբուկին ձայնը Վա-
րիզու ամէն թաղերուն մէջ կը լսուէր:

Այս ինչուան առաւօտեան հինգերորդ
ժամը սրահի մը մէջ մնացի, իշխանին
սենեկապան աղախնոյն հետ. ժամը վե-
ցին բերդին գաւիթը իջաւ թագաւո-
րը և զօրահանդէս մը ըրաւ բոլոր ազ-
գային պահապան զօրքերու և () ուի-
ցերացիներու, որոնք երգուընցան ին-
չուան ի մահ պաշտպան կենալ իրեն.
Թագուհին ալ իր տղոցմովը թագաւո-
րին ետեւէն կ'երթար: Այն միջոցին զօ-
րաց մէջէն քանի մը տեղը այլեւայլ ապրս-
տամբական ձայներ լսուեցան. բայց ու-
րիշ շատերը կեցցէ Խաթաւոր, կեցցէ
Խաթաւոր աղաղակելով՝ անոնց ձայնը խափա-
նեցին: Իսկ ես (Սիւլլուսի վրայ նո-
րէն յարձրկելու մերձակայ նշան մը
չտեսնելով, դուրս ելայ և դէպ ի Անա-
գետին երկայնութեամբը առաջ գացի
ինչուան նոր Կաթաւը ըստած տեղը.
ամէն տեղ ուրիշ բան չէր տեսնուէր՝
բայց եթէ խումբ խումբ մարդիկներու,
որոնք նիզակներով, երեքժանիներով
և տապարներով զինուած՝ յայտնի կ'ի-
մացընէին ինչ վախճան ունենալին:
Վարսիլիացւոց գումարտակը թընդա-
նօթներ և վառած լուցկիներ հետեր-
նին առած՝ կարգով կանոնով առաջ կը
քալէին, և ամէն տեղէ անցնելու ա-
տեննին ժողովուրդը կը յորդորէին որ
իրենց հետ միանալով, ձեռք տան բռ-
նաւորը իր տեղէն վերնտեղու, և ազ-
գային ժողովոյն մէջ ծանուցանեն թէ
աթուղէն վար ընկած է: Այս խօս-
քերս լսելով խիստ լաւ գուշակեցի ը-
լալիքը, և խռովարարներուն մէջէն անց-
նելով՝ մէկէն (Սիւլլուսի վաղեցի որպէս

զի պարտքս կատարեմ: Այսոր դարձայ պալատը, տեսայ որ ազգային պահապան զօրաց բազմաթիւ գունդ մը պարտիզի գունէն՝ որ թագաւորական կամաւորին զիմացը կ'իյնայ, խառն'ի խառն գուրս կ'ելլար և որոնց շատին երեսին վրայ յայտնի կը տեսնուէր ունեցած տրտմութիւննին և տագնապը: «Աեռաս առաւօտ երդում տուինք, կ'ըսէին, մեր թագաւորին պաշտպան կենալու, և ահա կարեւորագոյն միջոցին կը թողունք զինքը», 1) Էջերնէն ոմանք, որ խռովարարաց կուսակից էին, սպառնալեօք կը թշնամանէին իրենց ընկերները և կը բռնադատէին որ թագաւորը պաշտպանելէն ետ կենան:

Եւ կերպով ահա խռովարարները բռնացան նաև լաւերուն վրայ, և այն փնասակար վախկոտութիւնը որ պատճառ եղած էր խռովութեան, այն օրուան աղետիցը սկիզբն եղաւ: Իսկ ես պալատը մտնելու համար շատ աշխատելէս վերջը, հազիւ կրցայ ներս մտնել, զրան պահապան զինուորներէն մէկուն ծանօթ ըլլալով. մէկէն թագաւորին բնակարանը գացի, և ծառաներէն մէկուն աղաչեցի որ տեսածս և լսածս իմացընէ թագաւորին: Դամբ եօթնին շփոթութիւնը սաստկանալ սկըսաւ քանի մը վատասիրտ զօրաց գունդերուն պատճառաւ, որոնք 2) Վիլլըռիի պահպանութիւնը թողուցին: Բզգային պահապան զօրքերէն հազիւ չորս հինգ հարիւր հոգի միայն պէտք եղած քաջութիւնը և հաւատարմութիւնը ցրցուցին. զասոնք 3) Ուիցերացւոց հետ խառնելով՝ իրենց յանձնեցին պալատին ներքին պահպանութիւնը ու ներքին սանդուխներն և բոլոր դռներն. և որովհետեւ ամբողջ գիշերը խեղճերը առանց բան մը ուտելու անցուցած էին, ուստի շուտ մը աճապարեցի ու ծառայիցը հետ մէկտեղ հաց և գինի տանելու անոնց, և ամէն հարկաւոր պէտքերնին հոգացի, որպէս զի զօրանան և չթողուն թագաւորական ընտանիքը: Վիլլը մը վերջը թագաւորը պալատին ներքին կառավարութիւնը 4) Էջի մարա-

ջախտին, 5) աղբէ դուքսին, 6) Վիլլըռիի կոմսին, պարոն 7) Իոմէնիին, 8) Էրովիի կոմսին, և 9) Վիլլէ մարքէզին յանձնեց: 10) Պարտականք և ծառայք երդում ըրին մահերնին աչք առնուլ թագաւորը պաշտպանելու համար, ու ետքը բաժնուեցան այլեայլ սրահներու մէջ: 11) Վոլորնիս մէկէն 3 կամ 400 հոգի կրնայինք ըլլալ. բայց սուրէ և հրացանէ զօտ ուրիշ զէնք մը չունէինք:

Դամբ ութին վտանգը աւելի սաստկացաւ. Բզգային օրինագիր ժողովքը 12) Վիլլըռիի պարտեզին վրայ նայող գործարանի մը մէջ ժողովուած էր. թագաւորը շատ անգամ անոնց պատգամաւորներ խաւրեց իր վիճակը ծանուցանելու համար. որպէս զի ժողովքը քանի մը հոգի նուիրակ որոշէ մէջերնէն՝ որոնք իրենց խորհրդովը թագաւորին օգնեն: 13) Վոլովքը թագաւորին աս խընդրոյն պատասխան մը չտուաւ, թէպէտև յայտնի կը տեսնային բերդին վրայ յարձկնելու պատրաստութիւնները:

Վիլլ մը ատենէն Բարիգու նահանգին քաղաքական կառավարներուն կողմանէ քանի մը հոգի եկան թագաւորին, որոնց գլուխն էր 14) Էտերէր՝ ժողովքին ընդհանրական գործակալը: 15) Վիկայ, ինչպէս յայտնի կը տեսնուէր, դաւադիրներուն հետ համախոհ ըլլալով, եկաւ ժողովքին կողմանէ թագաւորին աղաչեց որ իր ընտանիքովը Բզգային ժողովքին պալատը փոխադրուի որովհետև ասպահով և վստահ չենք կրնար ըլլալ, կ'ըսէր, ազգային պահապան զօրաց վրայ. և եթէ չուզէնաս պալատը թողուլ՝ քու ասպահովութեդ երաշխաւոր չենք ըլլար:

Թագաւորը աներկիւղ և առանց այլայլելու յանձն առաւ այս առաջարկութիւնը. և թագուհոյն, պաշտօնեաներուն և ուրիշ քանի մը հոգւոյ հետ իր խուցը մտնելով՝ քիչ մը ատենէն դուրս ելաւ ժողովքին ներկայանալու իր ընտանիքովը հանդերձ: 16) Չորս կողմէն կ'երթային բազմաթիւ 17) Ուիցերացի և ազգային զօրքեր. միայն 18) ամ պալ իշխանուհոյն, և 19) Վիլլէ մարքէ-

զուհւոյն , որ թագաւորին տղուն խնա-
մատարն էր , թող տրուեցաւ որ թագա-
ւորին հետ երթան : Բայդէպքերը ա-
ռաւօտեան ժամը իննին պատահեցան :

Եւ ինքզինքս պալատին մէջ փա-
կուած մնացած տեսնելով , պարտիզին
վրայ նայող պատուհանի մը քով սար-
սափած կեցեր էի , սպասելով թէ թա-
գաւորին երթալը ինչ վախճան պիտի
ունենայ : Հազիւ թէ կէս ժամ անցեր
էր , տեսայ որ Ֆէօլեան ըսուած ճեմե-
լիքէն կ'անցնէին չորս մարդու գլուխներ
նիզակներու ծայրը անցուցած , որոնք
դէպ 'ի ազգային ժողովարանը կը տա-
րուէին : Երբեմն ասիկայ բերդին վը-
րայ յարձըկելու նշանն էր , որովհետեւ
անմիջապէս նոյն վայրկեանին ահաւոր
ձայն մը լսուեցաւ , թնդանօթներ և
հրացաններ , և կարկտի պէս զնտակ-
ները պալատին վրայ սկսան թափիլ .
ամենքնիս մեր զլիւռն ճարը տեսնալ
կը մտածէինք , որովհետեւ արդէն թա-
գաւորը պալատէն ելած էր . և թէ որ
չիլութային փախչելու , ալ անկէ ետքը
անկարելի էր , դռները ապստամբաց
ձեռքը անցնելէն ետեւ : Եւ ինչին անդին
վազեցի , բայց ամէն տեղ ճամբաներն
ու սանդուխները գոցուած գտայ դիակ-
ներուն բազմութենէն . որոշեցի թա-
գուհւոյն դստիկոնին պատուհանէն զիս
վար նետել , ուր որ ճեմելիք մը կար , և
անկէ պարտէզին մէկալ կողմը անցնե-
լով՝ Թառնան կոչուած կամուրջը հա-
սայ : Հոն գունդ մը Օուիցերացի զօր-
բերու որոնք ինծի առաջ գացած էին ,
ծառերուն տակը կը ժողովուէին . բայց
տեսնելով որ չորս դիս հրացանի զըն-
տակներ կը վիտային՝ ետ դարձայ դէպ
'ի ճեմելիքին նոր սանդուխը որ Ենա
գետին ուղղութեամբն է : Եւ զեցի վար
դատքել , բայց տեսնալով որ Նոր Կա-
ճաւը ըսուած մարտկոցէն շարունակ
թնդանօթի զնտակներ կը նետէինսիրտ
չըրի : Բիւ մը աւելի առաջ գացի նոյն
կողմէն ինչուան արքայորդւոյն պարտի-
զին դրանը մօտ , ուր որ քանի մը Բար-
սիլիացիք՝ քիչ մը առաջ անողորմաբար
սպաննած Օուիցերացիքը կը մերկացը-

նէին : Եւսոնցմէ մէկը ձեռքի արիւնտ-
շաղախ սրովը ինծի մօտեցաւ . “Ենչ
պէս կ'ըլլայ , ըսաւ , որ դուն քաղաքացի
ըլլալով առանց զէնքի մնացեր ես , առ
ահա սա սուրը և օգնէ մեզի սպաննելու
զասոնք ” : Բայց ուրիշ Բարսիլիացի
մը մէկէն առաւ սուրը : Եւ մենեւին զէնք
մը չունէի քովս , և հասարակ զգեստ
մը հագած էի . անանկ որ եթէ հե-
ռուանց կասկած մ'ալ ունենային որ ես
թագաւորին ծառայութեան մէջն էի՝
բանս շատ գէշ պիտի երթար :

Բանի մը ուրիշ Օուիցերացիներ
ալ որոնց ետեւէն ընկած էին , ախող մը
ապաստանեցան ուր որ ես ալ փախայ .
բայց ան խեղճերը իմ աչքիս առջև
անգութ կերպով սպաննուեցան : Տան
տէրը եղկելներուն աղաղակը լսելով
վար վազեց . ես աս առիթս յարմար
սեպելով մէկէն տունը մտայ , և առանց
ով ըլլալս իմանալու՝ հրաւիրեցին զիս
որ ինչուան վտանգը անցնի հոն մնամ :
Երպանիս մէջ քանի մը նամակներ և
լրագիրներ ունէի , որոնց երեսագիրը
արքայորդւոյն վրայ էր , և հրամանա-
գիր Թիւրքի պալատը մտնելու հա-
մար , և վրան գրուած էր անունս և
պաշտօնս , որոնք կրնային իմով ըլլալս
յայտնել : Հազիւ թէ քովէս նետեր էի
զասոնք , գունդ մը զինեւոյն ներս մտան
որպէս զի փնտռեն թէ արդեօք Օուի-
ցերացի պահուրտած զինուորներ կը
գտնուին այն տանը մէջ : Տանտէրը խը-
րատ տուաւ ինծի որ անխռով երեսով
գրասեղանի մը քով կեցած պատկերներ
նայելու պարագիւմ : Եւսովարարք քիչ
մը ատեն անօգուտ տեղ փնտռելէն ե-
տեւ , սկսան պաղ արիւնով մը իրենց ը-
րած անգթութիւնները պատմել , և
շատին ձեռքերը դեռ արիւնաշաղախ
էին : Եւստեան ժամը տասնէն ին-
չուան կէսօրուան չորս՝ հոն կեցայ , միշտ
աչքիս դիմացը ունենալով ան սոսկալի
եղեոնագործութիւնները , որոնք 'ի
գործ կը դրուէին Եւզովիկոս Ժե՛ ը-
սուած հրապարակին մէջ :